# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 88-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 3-ի արտահերթ նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՔԱՋԻԿԻ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԶՈՀՐԱՊ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԳՈՌ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

Ք.Քաջարան
2024թ. դեկտեմբերի 3

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-51, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 89-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 16.11.2006թ. № 1708-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական տարեկան բյուջեով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման, ներկայացման, դրանց քննարկման ու հաստատման կարգի 12-րդ կետի 2-րդ մասի ա/ ենթակետը», ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքապետարանի կողմից մշակված համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ «Քաջարան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում (Քաջարան քաղաքի Շահումյան 8, Բակունցի 5, Բակունցի 9, Խանջյան 12, Լեռնագործների 19 շենքեր)», 2. «Քաջարան քաղաքի Լեռնագործներ փողոցի հիմնանորոգում», 3. «Քաջարան քաղաքում պուրակների և այգիների կառուցում/բարեկարգում (Քաջարանի համայնքապետարանի հարակից այգու բարեկարգում», Աբովյան 4 և 6 շենքերի պուրակի բարեկարգում, Շիրվանզադե փողոցում պուրակների (Հանքագործների և Սիրահարների) կառուցում, Շահումյան փողոցում պուրակի կառուցում , Համայնքապետարանի հարակից պուրակի բարեկարգում, Տերյան 1-2 հասցեների, Տերյան 2-3 հասցեների, Տերյան 3-4 հասցեների բակային տարածքների բարեկարգում» ծրագրերը և 2025թ. պետական սուբվենցիայի հայտերը՝ համաձայն № 1, № 2 , № 3 հավելվածների: